ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ" Անհաղթի փ" հ" 11, (+374 11) 518-844,Էլ" փոստ՝ qanaqer_zeytun@yerevan.am

«ԿՈՄՊՍԹՈՐ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՍԱԹԵՆԻԿ ՄԱՂԱՔՅԱՆԻՆ
/Շիրակի մարզ, Գյումրի, Ն. Շնորհալու փ., շենք 19, բն. 28/

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԿՈՄՊՍԹՈՐ» ՍՊԸ-ի միջև 29.08.2024թ. կնքված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/235 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Ըստ պայմանագրի աշխատանքների վերջնաժամկետը սահմանված է եղել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 21-րդ օրացույցային օրը ներառյալ:

Վարչական շրջանի կողմից պայամանագրի կատարման ընթացքի հետ կապված արձանագրվել է, որ սահմանված ժամկետում չի մատակարարվել գունավոր A3 տպիչը (գնումների պլանով նախատեսված միջացիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) 30232130/8):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի

(պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 14.11.2018թ. թիվ 3407-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է կնքված պայմանագրից:

Պայմանագրի մաս կազմող «Տուժանքի մասին համաձայնագրի» համաձայն՝ Կապալառուն պարտավոր է որակավորման ապահովման համար վճարել 225000 ՀՀ դրամ, իսկ պայմանագրի կատարման ապահովման համար՝ 150000 ՀՀ դրամ գումարի չափով տուժանքները, որից հետո համապատասխանաբար համարելով Երևանի քաղաքապետարանի և Ձեր ընկերության միջև կնքված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/235 գնման պայմանագիրը լուծված՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՏԱԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Կատարող՝ Ս. Ղամբարյան
Հեռ. 011518890